



**ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**

www.mlri.org.am

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԵԿՈՒՅՑ**

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈՒՆԻՍԻ, 2019

Երախտագիտության խոսք

Այս փաստաթուղթը Պատասխանատու հանքարդյունաբերության շահառուների խորհրդատվության հարցերին վերաբերող փաստաթուղթ է, որը մշակվել է Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխումների կենտրոնի (ՀՕԲԿ) կողմից:

Փաստաթղթի տարբեր ասպեկտների վերաբերյալ օգտակար մեկնաբանություններ և առաջարկները ներկայացվել են Ալեն Ամիրխանյանի (Հայաստանի ամերիկյան համալսարան), Հարություն Մովսիսյանի (Երևանի պետական համալսարան), Արթուր Համբարձումյանի (Քաղաքացիական ձայն), Դավիթ Հակոբյանի (Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխումների կենտրոն), Աննա Շահնազարյանի (Հայկական բնապահպանական ճակատ), Լևոն Գալստյանի (Հայկական բնապահպանական ճակատ) և այլ քաղաքացիական հասարակության, ակադեմիական և աշխատողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների կողմից:

Սույն փաստաթղթի նախապատրաստական աշխատանքների զգալի մասը մշակվել է երբ ՀՕԲԿ-ը դեռ գործում էր՝ որպես Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն (ՀՕԲՆ) Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի շրջանակում:

ՀՕԲԿ-ի գործունեությունը կյանքի կոչվեց շնորհիվ Թուֆենկյան հիմնադրամի հովանավորության:

Բովանդակություն

Կազմ	1
Երախտագիտության խոսք	2
Բովանդակություն	3
Անփոփազիր	4
Մեթոդաբանություն և գործընթաց	6
Խնդիրներ և ազդեցություններ	9
Բնապահպանական	
Տնտեսական	
Սոցիալական	
Աշխատողների իրավունքներ	
Եզրակացություն	20
Մասնակիցներ	21

Ամփոփագիր

Տնտեսական աճի ու աշխատատեղերի ստեղծումից, մինչև օտարերկրյա ներդրումների ու տարածաշրջանային զարգացման հնարավորություններ՝ հանքարդյունաբերությունը մեծ դերակատարություն ունի Հայաստանի տնտեսության զարգացման գործում: Այնուամենայնիվ, օրենսդրության առկա թերությունները, գնահատման, մշտադիտարկման և կիրարկման վատ ուղու վրա լինելը բազմաթիվ ռիսկեր են ներկայացնում Հայաստանի համար:

Նկատելով ոլորտի կարևորությունը Հայաստանի տնտեսության մեջ և ձգտելով Հայաստանում պատասխանատու հանքարդյունաբերական գործելակերպին, 2018 թ. նոյեմբերին, ՀՕԲԿ-ը մեկնարկեց քաղաքացիական հասարակության շահառուների խորհրդատվության և հանքարդյունաբերության քաղաքականության մշակման նախաձեռնությունը:

Նախաձեռնության գործունեությունն իր բնույթով ներառական է, թափանցիկ և հիմնված ընդհանուր համաձայնության հանգելու սկզբունքի վրա: Այն ընդգրկում էր շահառուների մի շարք միջոցառումներ և ֆորումներ: Այն մասնակիցներին հնարավորություն ընձեռեց բացահայտելու հանքարդյունաբերության ոլորտում առկա հիմնախնդիրներն ու մարտահրավերները, ինչպես նաև հնարավորություն տվեց վերջիններիս առաջընթացներն անելու:

ՀՕԲԿ-ը փաստաթղթավորեց խորհրդակցությունների ընթացքում բարձրացված խնդիրները և մասնակիցների հետ համատեղ աշխատանքի արդյունքում մշակեց հանքարդյունաբերության ոլորտի առաջնահերթությունները: Շահառուների ութամսյա խորհրդատվությունների գործընթացն ավարտին հասավ 2019 թ. հուլիսին այս փաստաթղթի (ՀՕԲԿ շահառուների զեկույցի) հրապարակմամբ:

Սույն փաստաթուղթը ակադեմիական/գիտական փաստաթուղթ չէ: Այն խորհրդատվական փաստաթուղթ է, որը ներառում ՀՕԲԿ շահառուների կողմից կլոր սեղանի քննարկումների ընթացքում հնչեցված, ինչպես նաև անհատական հանդիպումների և գրավոր ներկայացված հանքարդյունաբերության մարտահրավերներն ու խնդիրները: Այն ներկայացնում է մասնակիցների հավաքական տեսակետները, և ոչ թե առանձին խմբերի կամ ՀՕԲԿ-ի տեսակետը:


Սույն փաստաթղթում արձանագրված խնդիրները դասակարգված են ըստ հանքարդյունաբերության չորս հիմնական ոլորտների՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական և աշխատանքային իրավունքներ, որոնց վրա հանքարդյունաբերության ազդեցությունը մեծ է: Մատնանշված խնդիրները ներառում են հանքարդյունաբերական գործառույթների ողջ շրջագիծը, ներառյալ՝ հանքերի պեղումը, շահագործումը և փակումը:

Բոլոր այն դեպքերում, երբ մասնակիցների կողմից բարձրացված խնդիրներն ու մարտահրավերները ակադեմիական/գիտական հիմնավորման անհրաժեշտություն են ունեցել՝ տրվել են համապատասխան հղումներ: Փաստաթղթավորված հիմնախնդիրները նախատեսված են ուղղորդելու Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի օրենսդրության քարեփոխումները:

Մեթոդաբանություն և գործընթաց

ՀՕԲԿ-ի կողմից ձեռնարկված շահառուների ներգրավվածության մեթոդաբանությունը հիմնված էր թափանցիկության, ներառականության և ընդհանուր համաձայնության գալու սկզբունքների վրա: Գործընթացը ներառում էր մի քանի փուլեր և շահառուներին տրամադրված բազմաթիվ հնարավորություններ՝ իրենց հայացքները կիսելու ինչպես հանրային, այնպես էլ անհատական կարգավիճակում:

Շահառուների խորհրդատվության գործընթացը փաստաթղթավորված է ըստ ստորև գծագրված գործընթացային քարտեզին.



Երեք կլոր սեղաններից յուրաքանչյուրն անցկացվել է տարբեր ձևաչափերով, ապահովելու ներգրավվածության և մասնակցության բարձր մակարդակ՝ ամբողջ խորհրդատվական գործընթացում:

Կլոր սեղան 1

Աշխատաժողով անցկացվեց՝ խմբերի բաժանելով շահառուներին, բացահայտելով հիմնական խնդիրները, պահպանելով առաջնահերթության կարգը: Խմբերից յուրաքանչյուրը ներկայացրեց իր հիմնական խնդիրն ամբողջ աշխատաժողովին:

Կլոր սեղան 2

Ցուցադրվեց մի շարք ներկայացումներ, որոնք ուղղված էին հայաստանյան և արտասահմանյան գիտնականների կողմից առաջ բերված հանքարդյունաբերության հիմնական մարտահրավերներին: Հանքարդյունաբերության ոլորտի օգուտների մասին քննարկումները մեկտեղվեցին ոլորտի առջև ծառայած հիմնական մարտահրավերների հետ: Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) չափանիշի վերաբերյալ և Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի բարելավման մասին հակիրճ ներկայացում է ցուցադրվել, ինչպես նաև դասախոսություն է մատուցվել ծախս-շահույթ վերլուծության մշակման վերաբերյալ:

Կլոր սեղան 3

Քաղաքացիական հասարակության և ակադեմիական խմբերի միջև քննարկումներ տեղի ունեցան ավելի քան երեք ժամվա ընթացքում, հնարավորություն ընձեռելով խմբերին, ինչպիսին են Հայկական բնապահպանական ճակատը, Քաղաքացիական ձայնը և այլք, գիտնականներին հետ քննարկել իրենց կարծիքը հանքարդյունաբերության բնապահպանական, սոցիալական, տնտեսական և աշխատողների իրավունքների մասին: Մասնակիցներին հնարավորություն տրվեց ոլորտին առնչվող հարցեր ուղղելու և մեկնաբանելու:

Լուսանկարներ ՀՕԲԿ-ի երեք կլոր սեղան քննարկումներից՝ քաղաքացիական հասարակության շահառուների կազմակերպությունների հետ:



Խնդիրներ և ազդեցություններ

Բնապահպանական

1. Հանքարդյունահանման լիցենզիա ունեցող որոշ սուբյեկտներ պնդում են, որ Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) տեխնիկական անճշտությունների պատճառով հատկացված հողատարածքները միաժամանակ հանդիսանում են նաև Հայաստանի ազգային պարկի մաս:
2. Ներկայումս շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) սահմանված չափորոշիչները բավարար մշակված չեն և այդ ուղղությամբ որևէ հաստատություն պարտավորություն չի ստանձնել: Անկախ փորձագիտական կամ պետական կառույցի՝ օրինակ ԳԱԱ-ի¹ կողմից գնահատման փոխարեն, հանքարդյունահանողներն իրենք են գնահատում իրականացում: Այսպիսի մոտեցումը կարող է կողմնակալ լինել կամ դիտվել կողմնակալ: Ավելին, բնապահպանական օրենսդրության անհամապատասխանությունները խառնաշփոթ են առաջացնում:
3. Հայաստանում «Էկոհամակարգերի ծառայություններ» հասկացությունը սահմանված չէ, ինչը խոչընդոտում է շրջակա միջավայրի վրա ազդեցության պատշաճ գնահատմանը: Բացի այդ, հստակ չէ նաև շրջակա միջավայրի պահպանության վճարների հաշվարկման մեթոդաբանությունը, քանի որ այն չի ներառում բնապահպանական համակարգի վրա հանքարդյունաբերության բոլոր գործառույթների ամբողջական ազդեցությունը: Սա անհամատեղելի է Օրհուսի կոնվենցիայով Հայաստանի ստանձնած պարտավորությունների հետ, որոնք պահանջում են շրջակա միջավայրի տարբեր տարրերի՝ օդի, ջրի, հողի, լանդշաֆտի, բնական վայրերի, կենսաբազմազանության գնահատումը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա վերջիններիս փոխազդեցության գնահատումը²:

¹ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Environmental and Social Impact Assessment (Series on International Best Practice, Working Paper No. 4, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p2

² Summary of main reform issues in Armenian mining legislation, Mining Legislation Reform Initiative, AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia, 2016). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p3

4. Հավաքական ազդեցության գնահատումը (ՀԱԳ) թույլ է տալիս ավելի համակողմանի գնահատել շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերության ազդեցությունը, քանի որ այն հաշվի է առնում էկոհամակարգի վրա հանքարդյունաբերական բոլոր գործառնությունների, ինչպես նաև անմիջական մերձակայքում արդյունաբերական գործունեությունների ազդեցությունը: Քանի որ Հայաստանի օրենսդրությամբ Հավաքական ազդեցության գնահատումը պարտադիր պայման չէ, բազմաթիվ հանքարդյունաբերողներ հավաքական ազդեցության գնահատում չեն իրականացնում³ անգամ այն պարագայում, երբ գոյություն ունի գնահատման մեթոդաբանություն:
5. Գործող օրենսդրությամբ թույլ են շրջակա միջավայրի գնահատման հիմնավորումները⁴: Թեև թափոնների կառավարման և դասակարգման իրավահարաբերությունները սահմանված են, սակայն հանքարդյունաբերական գործունեության բնապահպանական գնահատման խնդիրները շարունակում են հիմնական մտահոգության առարկա մնալ:
6. Հայաստանում հնարավոր է պոչամբարների ոչ պատշաճ կառուցումը, քանի որ վերջիններիս նախագծման, հաստատման և գնահատման հստակ կարգեր, չափանիշեր չկան. հետևաբար շրջակա միջավայրին հասցվող հնարավոր վտանգները կարող են եսկան լինել⁵ 6:
7. Հանքարդյունաբերության արդյունքում առաջացող թթվային, աղային կամ կաուստիկ դրենաժները, արտանետումները և նոր մետաղական գոյացությունները կարող են բացասական ազդեցություն թողնել Հայաստանի շրջակա միջավայրի վրա: Աղտոտման այս տեսակների մշտադիտարկման համար անհրաժեշտ է մշակել համապատասխան չափորոշիչներ և գնահատման համակարգեր⁷:

³ Ibid, p3

⁴ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Mine Waste Classification and Management (Series on International Best Practice, Working Paper No. 1, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p4

⁵ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Mine Waste Classification and Management (Series on International Best Practice, Working Paper No. 1, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p4

⁶ The World Bank (2016), Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment, April

⁷ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Mine Waste Classification and Management (Series on International Best Practice, Working Paper No. 1, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p6-8

8. Հանքարդյունաբերության արդյունքում առաջացող օդի, ջրի և հողի թունավորման բարձր մակարդակի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա խիստ ռիսկային է⁸: Ինչպես նաև առողջապահության և բնության պահպանության տեսչությունները լիովին չեն համարված կամ հարկավոր սարքավորումներով չեն օժտված՝ առկա մարտահրավերները դիմակայելու համար:
9. Հայաստանում հանքավայրերի փակման ծրագրերն ընդհանրական են և չեն ներառում կոնսերվացման, վերականգնման և պահպանման այն բոլոր չափանիշերը, որոնք կնպաստեն շրջակա էկոհամակարգի կայունացմանը⁹: Չնայած գոյություն ունեցող ուղեցույցերին, դրանք հիմնականում չեն կիրառվում, քանի որ պարտադիր բնույթ չեն կրում:
10. Գոյություն ունեցող փակ կամ նախկին հանքավայրերը պատշաճ կերպով չեն վերականգնվում: Տվյալ տարածքների վերականգնման նպատակով կառավարությունը բավարար միջոցներ չի հատկացնում¹⁰:
11. Հաշվի առնելով Հայաստանի հողային տարածքների չափը, հանքարդյունաբերության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կարող է տարածվել նաև Հայաստանի սահմաններից դուրս:

⁸ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Environmental and Social Impact Assessment (Series on International Best Practice, Working Paper No. 4, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p2

⁹ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Remediation, Rehabilitation and Mine Closure (Series on International Best Practice, Working Paper No. 2, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p4

¹⁰ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Compensation for Environmental Damage (Series on International Best Practice, Working Paper No. 3, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p3

Տնտեսական

1. Նախքան հանքարդյունահանման բուն գործընթացի սկիզբը՝ պատշաճ գնահատում չի կատարվում, պարզելու, թե այն ինչ տնտեսական ազդեցություն կունենա այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են գյուղատնտեսությունն ու զբոսաշրջությունը¹¹: Ավելին, չի կատարվում նաև հանքարդյունաբերության համար նախատեսված հողերի այլընտրանքային օգտագործման տնտեսական գնահատումը:
2. Հայաստանում ներկայումս չկա որևէ անկախ հիմնադրամ, որտեղ կկուտակվեն հանքարդյունաբերությունից ստացված պետական եկամուտները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում բնական պաշարները սահմանափակ են, առանց ապագա եկամտային հոսքերի ստեղծման, ռեսուրսների ինտենսիվ արդյունահանումը կարող է ազդել տնտեսական ապագա զարգացումների վրա:
3. Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի հարկային օրենսդրությունն առանձնապես չի տարբերվում տնտեսության այլ ճյուղերի օրենսդրությունից: Այնուամենայնիվ, հանքարդյունաբերական ընկերությունները հնարավորություն ունենեն 20%-ով շեղվել Լոնդոնի Մետաղների բորսայի գներից, ինչը հանգեցնում է հանքարդյունաբերությունից ստացվող պետական եկամուտների նվազման¹²:
4. Հայկական հանքարդյունաբերական ընկերությունները լիզորված չեն օգտագործելու մետաղի արդյունահանման ամենաառաջադեմ մեթոդները, այդպիսով ռոյալթիից եկամուտը սահմանափակվում է օգտագործված տեխնոլոգիայով:
5. Հայաստանում հանքարդյունաբերության հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասների փոխհատուցումն անբավարար է¹³:

¹¹ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Environmental and Social Impact Assessment (Series on International Best Practice, Working Paper No. 4, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p2

¹² EITI Legislative and Institutional Review, AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia, 2018), p7

¹³ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Compensation for Environmental Damage (Series on International Best Practice, Working Paper No. 3, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p3

6. Փոխհատուցումը սահմանվում է տարեկան բյուջեում և հասցեագրվում հանքարդյուրբերության հետևանքով տուժած համայնքներին: Սակայն շատ հաճախ միջոցները ծախսվում են այլ առաջնահերթությունների վրա կամ հատկացվում են այլ շրջանների^{14 15}:
7. Հանքարդյունաբերական ընկերությունները տնտեսական առումով բավականին խոցելի են համաշխարհային շուկայական գների նկատմամբ: Հայաստանում, ինչպես աշխարհի այլ երկրներում, նրանք չունեն երաշխավորված կայունություն և երբեմն անկարող են վճարել փակման կամ վերագործարկման ողջ ծախսերը¹⁶:
8. Հայաստանում պատմականորեն հանքավայրերի եկամուտների հաշվետվողականության և սեփականատերերի թափանցիկության վերաբերյալ օրենսդրությունը բավարար հստակ չէ¹⁷:
9. Հայաստանում հանքարդյունահանող ընկերությունները ֆինանսական պատասխանատվություն են կրում ազդեցությունների և վնասների համար: Սակայն, ինչպես այլ օրենսդրություններում, այնպես էլ այստեղ՝ միշտ չէ, որ գործում է անհատական պատասխանատվության ինստիտուտը¹⁸:
10. Հայաստանում չկա պարտադիր պահանջ, որը կհարկադրի հանքարդյունահանող ընկերություններին համապատասխան ֆոնդերից բավարար միջոցներ տրամադրել հողերի ամբողջական վերականգնման համար¹⁹:
11. Անբավարար են հաշվարկվում հանքավայրերի փակման և վերականգնման ծախսերը: Նախապես վճարվում է փակման ընդհանուր գնահատված գումարի մի փոքր մասը, իսկ մնացյալը վճարվում է լիցենզիայի ամբողջ ժամանակահատվածում կատարվող հատկացումների տեսքով: Վճարումները չեն հաշվարկվում ինֆլյացիան և

¹⁴ Ibid, p3

¹⁵ Summary of main reform issues in Armenian mining legislation, Mining Legislation Reform Initiative, AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia, 2016). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p3

¹⁶ The World Bank (2016), Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment, April, p 35

¹⁷ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Monitoring, Enforcement and Compliance (Series on International Best Practice, Working Paper No. 5, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p9

¹⁸ Environmental Protection (Chain of Responsibility) Amendment Act 2016 (Qld), p13

¹⁹ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Remediation, Rehabilitation and Mine Closure (Series on International Best Practice, Working Paper No. 2, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p13

վերականգնման գնաճը: Ավելին, հանքարդյունաբերական ընկերությունների կողմից ֆինանսական երաշխիքներ չեն տրվում այն դեպքերում, երբ հանքերի շահագործումը դադարեցվում է նախքան լիցենզիայի ժամկետի ավարտը^{20 21}:

²⁰ The World Bank (2016), Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment, April, p 35

²¹ Summary of main reform issues in Armenian mining legislation, Mining Legislation Reform Initiative, AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia, 2016). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p3

Սոցիալական

1. Հանքարդյունաբերությունը Հայաստանում կարող է դիտարկվել որպես հանրային շահին ծառայող լուրջ տիրույթ: Սակայն, ներկայումս գոյություն չունի որևէ մեթոդ, որը կհաշվարկի հանքարդյունաբերական գործառույթների արդյունքում Հայաստանի ակնկալվող շահը²²:
2. Սոցիալական՝ ներառյալ հանքարդյունաբերության հետևանքով առաջացած առողջական խնդիրները, Հայաստանում չեն դիտարկվում որպես բնապահպանական ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) բաղադրիչ: Դա մասամբ պայմանավորված է Բնապահպանության նախարարությունում հանքարդյունաբերության սոցիալական ազդեցությունների գնահատման որակավորում ունեցող մասնագետների պակասով²³:
3. Հակառակ օրենսդրական պահանջին, Հայաստանում հանքարդյունաբերական ընկերությունների կողմից առողջության վրա ազդեցության գնահատումներ (ԱՄԳ) չեն իրականացվում, քանի որ չկան համապատասխան չափորոշիչներ և ընթացակարգեր²⁴:
4. Հանքարդյունաբերությունից տուժած համայնքները բացահայտվում են իրենց իսկ օպերատորների կողմից և գնահատվում են Հայաստանի կառավարության կողմից²⁵: Տուժած համայնքների գնահատման հստակ չափանիշերի և չափորոշիչների²⁶ բացակայությունը կարող է հանգեցնել հանքարդյունաբերողների, կառավարության և տուժած տեղական համայնքների միջև վեճերի:
5. Հանքավայրի շահագործման և փոխհատուցման համաձայնագրերը կնքվում են իշխանությունների և ընկերությունների միջև՝ առանց ազդեցություն կրող

²² Summary of main reform issues in Armenian mining legislation, Mining Legislation Reform Initiative, AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia, 2016). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p7

²³ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Monitoring, Enforcement and Compliance (Series on International Best Practice, Working Paper No. 5, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p4

²⁴ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Environmental and Social Impact Assessment (Series on International Best Practice, Working Paper No. 4, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p4

²⁵ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Monitoring, Enforcement and Compliance (Series on International Best Practice, Working Paper No. 5, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p4

²⁶ EITI Legislative and Institutional Review, AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia, 2018), p18

համայնքների բավարար մասնակցության^{27 28}: Որպես կանոն, հետևանքներն առավել ծանր են ազդում աղքատ խավի վրա, որոնք էլ անկարող են սեփական միջոցներով հաղթահարել դժվարությունները:

6. Հանքարդյունաբերությունը կարող է այլ ոլորտների²⁹ տեղահանման պատճառ դառնալ. Հայաստանում դրանք կարող են լինել հատկապես տարածաշրջանային գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը:
7. Հանքարդյունաբերությունը կարող է նաև բնակչության կամ համայնքի տեղահանման պատճառ դառնալ, նախ, բուն արդյունահանման, կամ համապատասխան աշխատատեղերի նվազման պատճառով³⁰:
8. Հանքերն ինքնին սոցիալական դերակատարություն ունեն: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է իրական, շոշափելի ներդրումներ կատարել տեղական համայնքներում³¹:
9. Պատմականորեն Հայաստանում հանքարդյունաբերական պայմանագրերի կնքման գործընթացում հանրային մասնակցությունը թույլ է կամ ոչ բավարար³²: Սա ավելի է նվազեցնում հանրային ընկալման հնարավորությունը:
10. Պատմականորեն հանքարդյունաբերական ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների և հարկային վճարների հանրայնացման մասին օրենսդրությունը հստակ չէ³³: Հայաստանում հանքարդյունաբերության մեջ թափանցիկության պակասը նպաստել է վերջինիս նկատմամբ հասարակական անվստահությանը: ՇՄԱԳ գործընթացներում հանրային մասնակցայնությունը հետագա բարելավման կարիք ունի:

²⁷ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Mine Waste Classification and Management (Series on International Best Practice, Working Paper No. 1, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p4

²⁸ The World Bank (2016), Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment, April, p77

²⁹ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Environmental and Social Impact Assessment (Series on International Best Practice, Working Paper No. 4, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p2

³⁰ Ibid, p2

³¹ Blowfield, Michael and Murray, Alan 2008, Corporate Social Responsibility: A Critical Introduction, Oxford University Press (Oxford, United Kingdom)

³² EITI Legislative and Institutional Review, AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia, 2018), p8

³³ Ibid, p12

11. Հողում, ջրում և գյուղատնտեսական մթերքներում ծանր մետաղների և թունավոր էլեմենտների առկայությունը բարձրացնում է հանրային առողջությանը հասցվող ռիսկերը³⁴: Հայաստանում ծանր մետաղների գնահատման, չափման և նվազեցման համապատասխան չափորոշիչներ չեն մշակվել³⁵:
12. Պոչամբարները կարող են կառուցվել ոչ պատշաճ ձևով: Հայաստանում առկա է պոչամբարների հնարավոր սպառնալիք հանրային առողջությանը³⁶:
13. Հայաստանը մի շարք միջազգային պայմանագրերով, ներառյալ Օրիուսի կոնվենցիայով³⁷ ստանձնած պարտավորություններ ունի: Այդ պայմանագրերի հանձնառությունը կարող է նպաստել, որ հրապարակվի և հանրային իմացության առարկա դառնա հանքարդյունաբերության ազդեցության վերաբերյալ տեղեկատվությունը:

³⁴ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Environmental and Social Impact Assessment (Series on International Best Practice, Working Paper No. 4, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p2

³⁵ EITI Legislative and Institutional Review, AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia, 2018), p29

³⁶ The World Bank (2016), Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment, April

³⁷ Summary of main reform issues in Armenian mining legislation, Mining Legislation Reform Initiative, AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia, 2016). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p3

Աշխատողների իրավունքներ

1. Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտում տեղական աշխատուժն ավելի ցածր է վճարվում, քան նույն ոլորտում զբաղված օտարերկրյա աշխատուժը³⁸:
2. Հանքարդյունաբերական ընկերությունների բարձր պաշտոններում տեղացիները քիչ են, նույնքան հազվադեպ է տեղացիների առաջադրումը կառավարչական պաշտոններում³⁹:
3. Հանքարդյունաբերության ոլորտում աճում է պատահարների և վթարների ռիսկը⁴⁰: Արդյունաբերական վթարները Հայաստանում ավելի շատ պատահում են այն շրջաններում, որտեղ առկա է հանքարդյունաբերական ոլորտը⁴¹:
4. Աշխատանքի անվտանգության վերապատրաստման ծրագրերը կարող են դրական ազդեցություն ունենալ աշխատանքային վթարների կրճատման վրա⁴²: Աշխատանքի անվտանգության վերապատրաստման ծրագրերի պատասխանատվությունը գործատուին է, ներառյալ՝ հանքարդյունաբերող ընկերությունների տնօրեններն ու գործադիր մարմինները:
5. Հայաստանում, ինչպես և աշխարհի շատ երկրներում, չկա հանքարդյունաբերության ոլորտի աշխատուժի պարտադիր առողջապահական ապահովագրում: Անվտանգությունից անդին, այն նաև ֆինանսական բեռ է հանքարդյունաբերության աշխատողների և նրանց ընտանիքների համար:
6. Այնտեղ, որտեղ հանքարդյունաբերական ընկերությունները լիցենզիայով/արտոնագրով նախատեսված ժամանակից շուտ են փակվում, համապատասխանաբար ընդհատվում է նաև աշխատողների պայմանագրերը: Սա

³⁸ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Environmental and Social Impact Assessment (Series on International Best Practice, Working Paper No. 4, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p2

³⁹ The World Bank (2016), Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment, April, p77

⁴⁰ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Environmental and Social Impact Assessment (Series on International Best Practice, Working Paper No. 4, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p2

⁴¹ Vivoda, V. & Fulcher, J. (2017). Occupational Health and Safety (Series on International Best Practice, Working Paper No. 6, Mining Legislation Reform Initiative), AUA Center for Responsible Mining, American University of Armenia (Yerevan, Armenia). Retrieved from <http://mlri.crm.aua.am>, p3

⁴² Ibid, p4

տեղի է ունենում նաև այն ժամանակ, երբ հանքերի արդյունահանումը ընդհատվում է գնահատման նպատակով: Չկան համապատասխան ֆոնդեր, որոնք աշխատանքների ընդհատման կամ դադարեցման ժամանակ աջակցեն աշխատավորներին:

7. Հաճախ առողջապահության, անվտանգության և ռիսկերի կառավարման խնդիրներին չի հատկացվում անհրաժեշտ ուշադրություն, փոխարենը ուշադրությունն ավելի շատ կենտրոնացված է աշխատանքի անվտանգության վրա⁴³: Հայաստանում քիչ են այն ներկայացուցչական մարմինները, որոնք աջակցում, պաշտպանում են հանքարդյունաբերության ոլորտի աշխատողների իրավունքները:

⁴³ Ibid, p4

Եզրակացություն

Այս փաստաթուղթը խորհրդատվական փաստաթուղթ է, որը ներառում է ՀՕԲԿ-ի կազմակերպած հանքարդյունաբերության խնդիրների քննարկումների ընթացքում շահառուների կողմից արձարծված մարտահրավերներն ու խնդիրները: Փաստաթուղթը հանքարդյունաբերության խնդիրներն առանձնացնում և խմբավորում է ըստ չորս ոլորտների՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական և աշխատողների իրավունքներ:

Սույն փաստաթուղթը կարևոր ներդրում է ունենալու Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտում բարեփոխումների քաղաքականության մշակման գործում:

Մասնակիցներ

ՀՕԲԿ-ի խորհրդատվական նիստերին մասնակցել են քաղաքացիական հասարակության բազմաթիվ խմբեր, միջազգային հասարակական կազմակերպությունների գիտնականներ, աշխատողների իրավունքների պաշտպանների խմբեր և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչներ: Մասնակիցներից ոմանք թվարկված են ստորև.

Հասարակական ձայն

ԱՃԹՆ ԲՇԽ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ

Էկոլոգիական իրավունք

Էկոլուր

Հայ երիտասարդ իրավաբանների միություն, Կապան

Կանանց աջակցման կենտրոն

Երիտասարդ բնապահպան իրավաբանների և տնտեսագետների ասոցիացիա

Թռչնասերների կենտրոն

Հայկական բնապահպանական ճակատ

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հայաստանի հելսինկյան կոմիտե

Կապանի հասարակական երիտասարդական կենտրոն

Երևանի պետական համալսարան

Փրկենք Թեղուտը

Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական միություն

Հայ օգնության միություն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն

Հայաստանի ամերիկյան համալսարանի «Ցակրեան» բնապահպանական կենտրոն